ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է

Այս տարվա հունվարի 20-ից Բաքվում և Ադրբեջանի մի շարք այլ շրջաններում գործում է արտակարգ դրությունը: Սեպտեմբերի 30-ին անցկացված ընտրություններից առաջ Բաքվի զինվորական պարետ, գնդապետ Վալերի Բունիաթովը հրամաններ արձակեց. «Իրադրության սրման կապակցությամբ սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 2-ն ընկած ժամանակաշրջանում սահմանափակել այլաֆաղաֆացիների մուտքը Բաքու»:

Հանրապետության պրեզիդենտական խորհուրդը պարետի հրամանը հարակցել է համապատասխան պարզաբանումներով. քաղաք թույլ չպետք է տալ ընտրությունների այն դիտորդներին, որոնք չեն հրավիրված պաշտոնական տայանների կողմից:

Ինչ վերաբերում է լրագրողներին, ապա նրանք ևս մուտք չունեին ընտրությունները լուսաբանելու համար. այդ պարտականությունն իր վրա էր վերցրել կառավարական «Ազերինֆորմ» գործակալությունը:

Նախընտրական արշավի մյուս քրեաբարոյական գիծը ընտրողներին կաշառելու բազում դեպքերն են: Հանրապետական «Վիշկա» թերթի - հաղորդման համաձայն, շրջկոմների քարտուղարներից մեկը խոսք է տվել իր ընտրողներին նվիրել հարյուրական ռուբլի: Ականատեսները պատմում են նաև այնպիսի դեպքերի մասին, երբ ընտրողներին բաժանել են «նվերներ»՝ գունազարդ սկուտեղներ, սփռոցներ, անձեռոցիկներ և այլն:

Ադրբեջանի ԳԽ պատգամավորների ընտրություններն անց են կացվել 349 տարածքներում՝ 360 տեղերի ընդհանուր թվից, որովհետև Լեռնային Ղարաբաղին հատկացված 11 տեղերը մնալու են թափուր:

Ընտրված պատգամավորների մեծամասնությունը ավանդական ընտրախավի ներկայացուցիչներն են՝ կուսակցական, խորհրդային, տնտեսական ղեկավարներ: Համազգիչ հաղթանակ տարավ հանրապետության ՆԽ նախագահ Հասան Հասանովը՝ Թուրքիայի հետ կապերի ամրապնդման ամենաակտիվ ջատագովներից: Նախիջևանում ընտրողների ձայների բացարձակ մեծամասնություն (95 տոկոս) հավաքեց տխրահռչակ Հեյդար Ալիևը: Ստանալով ԱԺՃ-ի Նախիջևանի բաժանմունքի պաշտպանությունը, ԽՄԿԿ ԿԿ-ի քաղբյուրոյի նախկին անդամը անսպասելիորեն հանդես եկավ արմատական ազգային-դեմոկրատական ծրագրով:

Բաքվի պարետ Վալերի Բունիաթովը պարտություն կրեց. նրանից առաջ անցավ մսակոմբինատի տնօրենը: Իսկ պարետի հայրը՝ ակադեմիկոս Զիա Բունիաթովը, դեռ պետք է մրցի ԱԺՃ-ի վարչության անդամ Իսա Կամբարովի հետ:

Չնայած ԱԺՃ-ի զգալի պարտությանը, այնուհանդերձ, փորձը ցույց է տալիս, որ ոչ մեծ, բայց լավ կազմակերպված օպոզիցիայի խորհրդարանային խումբը կարող է խթանել ամբողջ պառլամենտի արմատականացումը, հատկապես ազգային ինքնիշխանության հարցում: Բացի դրանից, ներկայիս ադրբեջանական ղեկավարությունը ևս, ձգտելով ժողովրդականություն ձեռք բերել, ավելի ու ավելի հեռանում է կենտրոնից:

(«Կոմերսանտ», հոկտեմբեր 1990 թ.)